

ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԿՅԱՆՔ

ՇԲԵՂ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀՅՈՒՄԱՏՈՍԱՐԱՆԻ ՄԵԶ



ոյեմբերի 25-ին նյու-Յորքի
Սովետական Հյուպատոսարա-
նի մեջ կատարվեցավ շքեղ ըն-
դունելություն՝ Հայկական Սո-
վետական Հանրապետության հաստատման
27-րդ տարեդարձի առթիվ:

Ընդունելությունը կատարվեցավ Հյուպա-
տոսարանի հոգակերու նոր շենքի մեջ:

Մարմարակերտ սանդովաներու վերև հրա-
վիրալները ընդունվեցան ընդհանուր Հյու-
պատոսի՝ ծակով կոմաքինի ու իր տիկնոց և
Միացյալ Ազգերու ընդհանուր ժողովի սովե-
տական պատգամավորության անդամ Փրո-
ֆեսոր Համազասպ Հարությունյանի կողմէ:

Այն իրողությունը, որ Անտրեյ Վիշինսքին,
Միացյալ Ազգերու ընդհանուր ժողովի սովե-
տական պատգամավորության պետը և Սո-
վետ Միության Արտաքին գործոց փոխ-նա-
խարարը, անձամբ ներկա էր և ողջունեց հայ
ժողովուրդը իր ազգային պանծալի ազատա-
զրության 27-րդ տարեդարձի առթիվ, ներ-
կաներու համար մեծագույն պատիվն էր:

Արտառուչ էր մտերմությունը պատկառելի
ալիքառ սովետ պետական մարդու և Հյուրե-
րու միշե, որոնք մեկ մարդու պես սեղմած
էին. Անտրեյ Վիշինսքին շուրջ և օվաննանե-
րով կողջունեն անոր արտասանած ամեն մեկ
խանդապառ, շերմ խոսքը հայ ժողովրդի
բախտավոր ներկայի և ավելի փայլուն ապա-
գայի մասին:

Անդույն Վիշինսքին հին բարեկամ է հա-
յերան: Ցարիկմի բռնատիրության տարինե-
րուն Վիշինսքին Պաքովի մեջ մուտեն ծանո-
թացած էր հայ ժողովրդի ազգային ազատա-
զրական ներշնչումներու և ձգտումներու
հետ և ոչ նվազ եռանդով պայքարած էր հայ
ժողովրդի թշնամիներու և դավաճաններու
դեմ:

Ոգևորությունն իր գագաթնակետին հա-
սավ, երբ Անտրեյ Վիշինսքին ըստավ. —

Երբ ես երիտասարդուրյանս առեն Պաքու

ի, այն ժամանակ հայերը կերպեին մեկ երգ,
որու առաջին երկու բառերը մինչև հիմա ան-
շընչելուրեն դրամված են իմ մտքի վրա. —
«ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ»: Մենք այդ երգը լսելով,
միշտ կեացցնեինք մեր հայ եղբայրներուն և
ժույշերուն. — «Ո՞ւ է հայերու հայրենիքը»:
Ավան՝ այն ժամանակ հայերը հայրենիք
չունեին: Իսկ հիմա, իր արգասիք Ռուական
Մեծ Հոկտեմբերի, հայերն ունին իրենց ա-
զատ Հայրենիքը, «Մեր Հայրենիքը», հանձինս
Սովետական Հայաստանի և համայնքն Սովե-
տական Սոցիալիստական Հանրապետու-
թյուններու Միուրյան:

Եվ շենք է հայերու այսօրվա Հայրենիքը և
ծաղկուն: Ենդ մենք կպարտինք լենինի և
Ստալինի ազգային, բայսականության: Եվ
հայերը իրենց ազատ Հայրենիքի մեջ զերծ
են կարիքն և հարձակում կրելու վախեն ու
կվայելուն հոգածուրյանը ընկեր Ստալինին:

Անտրեյ Վիշինսքին խոսեցավ ոռուերենով
մը, որ թեև չես հասկնար, բայց կզգաս, մա-
նավանդ կզգաս, սովետական պետական մար-
դու խոսքերու շերմությունը և կուզես անվերջ
լսել, Ստեփան Ապրեսյան, ամերիկահայոց
կողմեն շատ սիրված նախկին սովետական
փոխ-հյուպատոսը և Միացյալ Ազգերու ընդ-
հանուր ժողովի սովետական պատգամավո-
րության մամուլի կցորդը, թարգմանեց հիա-
նալի սահուն հայերենով:

Անտրեյ Վիշինսքին, սակայն, «Մեր Հայրե-
նիք» բառերն արտասանեց հայերեն մաքուր
առողջանությամբ՝ էլեկտրականացնելով ամ-
բողջ մթնոլորտը:

Ներկաները ոչ նվազ պատվված զգացին
վայելելով ներկայությունը Միացյալ Ազգե-
րու Ապահովության խորհրդի մեջ Սովետա-
կան մնայուն ներկայացուցիչ Անտրեյ Կրո-
միքոյի, որ շարունակ մտերմական զրուց
ունեցավ անվերջ զինք քրջապատող խոսմբե-
րու հետ:

Ընդունելության ներկա էին նաև Սովետա-
կան Միության պաշտոնյաներին լիու-Հյու-

պատու ջ. Զեփուրնիխոր, ներգաղթի լիազոր Տեր և Տիկ. Շահնազարյան, Տեր և Տիկ. Դեվորդյան և ուրիշներ:

Հրամիքը լանկորու մեջ էին Առաջնորդ Սրբազնը, Ազգային Խորհրդի ամբողջ կազմը, «Լրաբեր»-ի, «Պայքար»-ի, «Երիտասարդ Հայաստան»-ի, «Հայաստանի կոչնակ»-ի, «Արմինիքն Միքրո Սփերֆեյլը»-ի Խմբագիրներն ու թղթակիցները, Հայտնի Հայասեր ամերիկացիներ և Յուն-Յորդի, Ֆիլատելիքայի, նյու ճընդիի և նյու ինկլինտի գաղութեն ազգայիններ:

Հայկական Սովետական Հանրապետության 27-րդ տարեդարձի առթիվ սարքավոծ այս շքեղ ընդունելությունը Սովետական հուպատոսարանի մեջ, բացադիր պատիվ մըն էր հայ ժողովրդի համար, որ Սովետական Միության մեջ, իր ստեղծագործական մեծ ջանքերուն միացնելով եղայրական ժողովություններու և հատկապես ուսւ մեծ ժողովրդի անսահմանափակ օժանդակությունը, կհրաշակերտ իր կենսանորոգ Ազատ Հայրենիքը, ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ,

(«Վարեր» 29 նոյեմբեր 1947 թ.)

ՄԻԶՈՑՆԵՐԻ ՀԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՄՆ-ՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԴԵՐԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅՐԵՆԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՆՅՈՒ-ՀՈՐԲ, 8 փետրվարի (ՏԱՍՍ).— «Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը» ԱՄՆ-ում այս տարի մեկ միլիոն դոլարի հանգանակության կամպանիա է անցկացնում օժանդակելու, համար հայերի հայրենադարձությանը ո՛չ միայն Միացյալ Նահանգներից, այլ և մյուս շատ երկրներից: Անցյալ տարի Միությունը հավաքել է պակելիքն մեկ միլիոն դոլար: Անցյալ ամիս միջոցների հանգանակության կամպանիան սկսելու ժամանակ նյու-Յորքում կազմակերպվել է պակելիքն 65 հազար դոլար: Այդ նպատակով շատ ճաշկերույթներ և միտինգներ արդեն կազմակերպվել են կամ պիտի կազմակերպվելու ժամանակում, Դեպրոյտում, և շատ ուրիշ կենտրոններում: Արդեն հավաքել է մոտ 150 հազար դոլար, իսկ շատ հայեր լրացրել պարտավորություններ են ստանձնել դրամ մուտքելու համար: Միությունն ունի մոտ 9 հազար անդամ և 126 բաժանմունք՝ Միացյալ Նահանգներում, Կանադայում ու Ղատինական Ամերիկայում:

Միության ղերեկուոր Մեսիհայանը ՏԱՍՍ-ի թղթակցին հայտարարել է, որ ինը հազար մարդ կարող են այդպիսի մեծ դումար հավաքել միայն նրա համար, որ ամերիկահայերի հակայական մեծամասնությունը, մոտ 150 հազար մարդ, Սովետական Հայաստանը դիտում են որպես իրենց հարազատ տունը և բուռն կերպով ցանկանում

են ամեն հնարավոր բան անել բուժելու համար այն վերքերը, որ պատերազմը պատճառել է Սովետական Հայաստանին և օգնել պատերազմից տուժած մյուս երկրների հայերենիք վերադառնալու:

Միությունը վերջին 20 տարիների ընթացքում օգնություն է ցույց տալիս ամբողջ աշխարհի հայերին: Նա առաջին անգամ միջոցների հանգանակության մեծ կամպանիա կազմակերպեց 1944 թվին, երբ հավաքվեց 250 հազար դոլար. 1945 թվին Միությունը հավաքեց կես միլիոն դոլար, իսկ այնուհետև կամպանիա հայտարարեց տարեկան մեկ միլիոն դոլար հանգանակելու համար: Միությունը, որն ունի ինչպես մեծահասակ, այնպես էլ երիտասարդ անդամների բաժանումները, բացի ճաշկերույթներում ու միտինգներում կազմակերպվող հանգանակություններից, Միացյալ Նահանգներում այցելում է յուրաքանչյուր հայի տուն՝ միջոցների հանգանակելու համար: Մեծ մասը ամենայն պատրաստակամությամբ, սիրով, ըստ հնարավորին օգնում են հայրենիքին: Միության հիմնական ինդիքն է օգնություն ցույց տալ հայերի հայրենակարձությանը պատերազմից ավերված երկրներից, որտեղ նրանք ենթարկվում են ծանր տառապանքների: Հայերն ամենուրեք շնորհակալություններ են հայտնում Սովետական Միությանը այն բանի համար, որ նա իրենց առաջարկությունը մեջ էր իրեն կազմակերպի դռները:

ԲԱՑԿԱԾ Է ՆԵՐԳԱՂԹԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՀԱՄԱՁԳԱՅԻՆ

ՀԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Միրելի Հայրենակիցներ, Մեր արևելյան գաղութները մեծ եռուզենի մեջ են դարձյալ: Ներգաղթի կարավանները իրարու ետևե կմեկնին Հումաստանեն, կիբանանեն և Սուրբիայն: Մեզի հասած տեղեկությանց համաձայն, 13 հազար ա-

վելի անձեր այս վերջին երկու ամիսներու ընթացքին հայրենիք վերադարձած են արդեն այս երկիրներեն ու տարագիրի մոայլ ճակատագիրը այլևս վերը գոտած է անոնց համար: Ուրիշ հազարավորներ, նույն վայրերուն մեջ, իրենց կարդին կապասեն, որպեսզի

գերագույն փրկության ժամը հնչե իրենց
ամար ևս Փութկոտ, խաղաղավոր պատ-
րաստություններ կտեսնալին նաև Եգիպտո-
սի, Ֆրանսայի, Պարսկաստանի մեջ և այլուր:

Աղքահավաքման այս սրտագրավ ենաս-
րանին առջև, որ դարավոր երազը կիրակա-
նացնե, ամեն հայ կլեցվի Հուզումով և Հր-
պարտությամբ: Եվ իր գոռունակության
զգացումը կըլլա այնքան խորունկ, որքան
որ ինքն ալ իր նպաստը մատուցած է այդ
փրկավետ ձեռնարկին իրագործման:

Կատարենք ուստի մասնաւոր բարեկարգությունը՝ պահպան և ապահովությունը առաջարկելու համար։ Այս պահպանը կազմությունը կատարում է առաջարկելու համար և ապահովությունը կատարում է առաջարկելու համար։

Վաստա՞ն եմ թե այս կոչին մեզեն բոլոր
Հայ գաղութները պիտի ուզեն լսել պատ-
դամը մեր Հայրենիքին շինարար կառավա-
րության, որ բովանդակ հայությունը կպատ-
վի՝ զայն իր հոյակապ ձեռնարկին գործակ-

Նախագահ

Նախագահ Հ. Բ. Գ. Մինության ԱՐԵԱԿ ԳԱՐԱԳԵՈՉՅԱՆ
(«Հարբեր» 18 հոկտ. 1947 թ.)

ԶԵԿՈՒՅՑ Z. F. C. ՄԻՈՒԹՅԱՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՎՔ ԱԼԽԱԼԳՈՒՅ

Կեզրոնական ճռուվը նկատի առնելով
նախագահ Տ. Արշակ Գարակեովյանի հա-
ռաջացած տարիքը, և իր բնդարձակ գործին
պարտադրած զբաղումն ու հոգեբը, իր վեր-
ջին նիստերուն մեջ ընտրեց երեք փոխ-
նախագահներ՝ Տիգրք Լ. Կերտան, Հ. Թու-

ՀՐԱԺԱՐԱՎԱԿԱՆ ՎԱՐԻՉ-ՊԱՏԾ
ԽՆՀԱԲԻՆ որ արդեն ծանուցինք, Տ. Վահան
ՄԱԼԵԿՈՂՅԱՆ մարիս 1-ին Կեղրոնական
Վարչության վերջնականապես իր հրաժա-
րականը ներկայացուցած ըլլալով, Վարիչ-
Պատվիրակի և Քննչանոգի Տնօրենի պաշ-
տոններեն, Կեղոնական վարչության ժողով

ՊՈՂՈՍ ՆՈՒՊԱՐԻ
Միության Փարիզի Գործադիր ժողովի
նախաձեռնությամբ, ինչպես ամեն տարի,
այս տարի ևս հունիս 22-ի օրը Փարիզի Ս.
Հովհաննես Մկրտիչ եկեղեցին մեջ հանդի-
սավոր Պատառաս և Հովհաննեսա տեսի

ՀԱԳՈՒՍՏԵՂԵՆ ՀՕԳՈՒՏ
Նկատելով որ այս տարի ներգաղթը շուտ
կակսի և բազմատարար շուտ ալ պիտի վեր-
շանա, մանավանդ Հունատանի մեջ, Կեդ-
րոնական Վարչովիլունը 15 հազար տոլարի
վարկ մը քվեարկեց, անմիջապես նոր 4

յության հրավիրելով, Արժանի ըլլանք
մեզի ընծայված պատիվին:

Խոսքն կուղիմ մասնավրապես Միացյալ Նահանգներու, Հարավային Ամերիկայի և Գանատայի մեր համայնքներուն, որոնք բախտը ունեցան պատերազմին անմիջական արձավիրքներին և համատարած ավերեներին զերծ մնալու, որպեսզի, անցյալ տարվան նման, միևնույն հալրենասեր խանդավառությամբ և գովելի զո՞ւաբերությամբ իրենց ամենալայն մասնակցությունը բերեն հանգանակության,

Հետեւաբար բացված կհայտաբարեմ մեկ
միլիոն տոլարի նոր արշավը։ Ազգը կըս-
պասէ, որ ամեն հայ մարդ իր պարտքը
կատարե։

Ներդադիրի կարավանները իրարու ետևի
կժեկնին:

Հպարտությամբ զիտենք զանոնք և մեր նվիրական գործին ձեռնարկենք եռանդով ու հայտարարությամբ:

Հ. Բ. Ռ. Միուրյան ԱՐԵԱԿ ԳԱՐԱԳԵՈՂՅԱՆ

(«Հայբեր» 18 հոկտ. 1947 թ.)

լազյան և Տ. Տիրատուրյան, որպեսզի գործն զեր մը ստանձնեն այսուհետեւ և աշխատանքի բաժանման սկզբունքին համաձայն նախագահական պարտականությանց մեկ մասը իրենց վրա առնեն, առ այդ ի սպաս զնելով իրենց ամբողջ ձեռնհասությունն ու փորձառությունը:

ՊԱԿ Տ. Վ. ՄԱԼԵԳՅԱՆԻ

զովր իր իսկ առաջարկությամբ, Կեդրոնական Վարչության ժողովի կողմէն S. Գրիգոր Կիրակոսյան անվանվեցալ Կեդրոնական Գրասենյակի Տնօրին, պաշտոն՝ զար պիտի վարել Վարիչ— Պատվիրակին մեկնումի ընտանիքն.

2001-2002

ունեցած է, ի հիշատակ և ի հարգանս մեծ
բարեկար և Հ. Բ. Ը. Միության հիմնադիր-
նախագահ ողբացյալ Պողոս Նուպար Փա-
շացի, իր մահվան 16-րդ տարեկացին առ-
նելով:

ԵՐԳԱԴՐՈՒՅԹ

զործածված հագուստեղին լրկելու համար Երևան, Պաթումի ճամբար, Ներքաղլողների ընդունման և տեղավորման կոմիտեի նախագահ՝ Բ. Աստվածատրյանի հացեին,

որպեսզի մասամբ Սուրիո, բայց առաջեն ներուն բաշխել տա զրկված Հագուստները լավես Հովհանստանի շքավոր ներգաղթող- և կոչիկները, Հայաստանի մեջ իսկ:

ՆԵՐԳԱՂԹԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներգաղթի մեկ միլիոն տոլարի հանգա- նակությունը հետևյալ արդյունքու տված է Ամերիկայի մեջ.—

Միացյալ նահանգներու մեջ հանգանակ- ված է 559.106:

Հայրենակցականներու կողմի վճարված է 310.375:

Հարավային Ամերիկայի մեջ 130.000 Գանատայի մեջ 10.375:

Ընդամենը 1.009.857:

Ներգաղթի համար ծախսված գումարնե- րու պատկերն է.—

1946-ին Խորհրդային Հայաստանի կա- ռավարության փոխանցված է 300.000

1947-ին Խորհրդային Հայաստանի կառա- վարության փոխանցված է 100.000

Սուրիո և Լիբանանի ներգաղթողներու ձա- նապարհածախս 104.309

Պարսկաստանի ներգաղթողներու ձանա- պարհածախս 70.000

Հովհանստանի ներգաղթողներու ձանապար- հածախս 32.500

Պուկարիո ներգաղթողներու ձանապարհա- ծախս 15.000

Հագուստեղեն հօգուստ շքավոր ներգաղթող- ներու 26.634

Ընդհ. ծախս (հանդեսներու, երթեկու- թյան, ծանուցումներու, հեռագրի, թղթատա- րի, գրասենյակի պաշտոնյաներուն և այլն) 16.508

Պատրաստ դրամ 44.915

Ընդամենը 1.009.857

Վարիշ—Պատվիրակ ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆ
(«Հայաստաննեան ճակատ» նոյեմբեր 23 1947 թ.)

ԲԱՆԱՁԵՎ ՀԱՅՈՑ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Ընդունված Ամերիկան Հատաջիմական Միուրյան 10-րդ համագու- մարին կողմեա, օգոստոս 31, 1947 թ. Տիրուարի մեջ.

1. Հայ ժողովրդի դարավոր հերոսական գոյամարտը և Ազգային Ազատ Պետություն վերստեղծելու անվճարելի պայքարը հաղթա- նակեցին—Հաստատումով պանծալի Հայ- կական Սովետական Պետության՝ պատմա- կան Հայաստանի մեկ տասներորդ հողամասի վրա:

2. Ցորչափի, սակայն, Հայաստանի ինը տասներորդ մասը կմնա հայաշինց թուր- բիայի նվաստացուցիչ լուծի տակ, և միշադ- գային վավերագրերով և պաշտոնյական ակ- տերով ճանցված ազգային իրավունքները չեն հատուցված հայ ժողովրդին, Հայկական Հարցը հաշվեհարդարի ենթարկված կարելի է նկատել բնակ:

3. Հայ ժողովուրդը, Մայր Երկրի թե Սփյուռքի մեջ, կպահանջեա.—

Հայապատկան նողերու բնդմիշտ ազա- տագրումը ցեղասպան Թուրքիայի արյունա- ծոր նիւրաներեն և այդ նողերու ՄԻԱՅՈՒՄ սիրելի Սովետական Հայաստանին, որ կնան- դիսանա համայն հայուրյան Ազգային Ազատ Հայրենիքը:

4. Հայ ժողովրդի հողային այս պահանջը թուրքիային հիմնավորվի հետևյալ անհեր- քելի իրադարձումներով.—

Ա. Պատմականապես այդ հողերը կպատ- կանին հայ ժողովրդին: Այդ երկրամասի վրա

կերտված է հայոց պատմության մեկ կարևոր մասը:

Բ. Այսօրվա տարագիր և բնավեր մեկ ու կես միլիոն հայերու տունն ու տնտեսությունը աւտ Երկրամասի մեջ կմնան լրված ու խո- պան:

Գ. Հիմա որ սկսած է տարագիր հայության ամբողջական հայրենագարձը, Սովետական Մայր Հայաստանը պետք է վերստանա այդ հողերը, ազատորեն տեղավորել կարենալու համար տոն դարձող հայրենակարոտ և հոգ- նատանց իր որդիներն ու դուստրերը:

Դ. Ազատ Հայ Պետության տնտեսական հետագա անարգել զարգացման և ալ ավելի բուն վերելիքի համար էական է և կենսա- կան, որ այդ հողերը վերադարձին իրեն օրինավոր տիրո՞շ՝ Հայկական Սովետական Հանրապետության:

5. Հայ ժողովրդի համազգային միահամուռ կամքն իր լրիվ արտահայտությունը գտավ Համաշխարհային Հայկական Քոնկրետով, որ դիմումնագրով մը պահանջեց Միացյալ Ազ- գերեն.—

Նախագահ Ռուտրո Ռիլսընի սահմանագր- ծած Հայկական երկրամասը մտցնել Հայկա- կան Սովետական Հանրապետության սահ- մանեառան մեջ:

Ամերիկահայ Հառաջդիմական Միության

10-րդ համագումարը խանդավառությամբ
կրդզումն Համաշխարհային Հայկական Քոնկ-
րսիսի այս հոյակապ ակտը և կիսուանան իր
բոլոր ուժերն ու միջազգային ի սպաս դնել հա-
յոց հողային պահանջմն օգտին, և անդադար
գործել մինչև որ արդարություն ըլլա հայ ժո-
ղովրդին:

6. 10-րդ համագումարը, արտահայտելով ամբողջ Հայ ժողովրդի վրագովմունքը, կդատապարտե Միացյալ Նահանգներու կողմէ Թուփք կառավարության տրված զինվորական օժանդակությունը և Թուրքիայի հողային ամբողջականությունը պահպանելու հանձնառությունը, որ ծանրոթ է Թրումենի վարդապետությունը, անոնքում:

Ա. Որպէսիսկ Թրումենի վարդապետովթյունը ժխտումն է Նախագահ Ռուբեր Ռիվլընի փառավոր ակտով բազմաշարչար հայ ժողովը նկատմամբ ստանձնած Միացյալ Նահանգներու հանդիսավոր պարտավորությանը,

Բ. Որովհետև Թրումենի կարգապետովթյունը գլխովին հՀակաղովի Ասոլանտյան Հրաշտակին, որ հիմնաքարն է Միացյալ Ազգերու Կազմակերպության և որ կճանշնանշված ազգերու պատ և անկաշկանդ աղբային ինքնորոշման իրավունքը և կխոստանա բռնաբարված սահմաններու վերականգնումը:

Գ. Որովհետեւ Թրումենի վարդապետությունը կդրսել Թուրքիայի ծավալապաշտական խորժակները, կփակե ազատագրության մենք ճամբար թուրք բռնապետական կառավարության կալանավոր ազգային փոքրամասնություններու առջև, և կարգելակե դեռ կլրասիի գարգացումն ու խաղաղության մարդագումը Միջին Արևելքի մեջ:

7. 10-րդ համապնդարք ետ կմղե հայոց Հողային պահանջին սովետական անգու ծավալապաշտովով վերագրելու փորձերն ու չարբանությունները:

Ա. Հայկական Հարցը նախա-սովորական հաստիք:

Բ. Այն հողերը, զորս այսօր ժողովուրդը կպահանջե միացնել Հայկական Սովետական Հանրապետության, Սեփթի դաշնագրով և Ուստի Ովկլունի իրավարարությամբ սահմանված էին դառնալու հայ պետության երկրամասը—միացած Կովկասյան Հայաստանի հետ։ Այն փաստը, որ ազգային ինքնորոշման իրավունքով Հայաստանի մեջ հայ ժողովուրդը ստեղծեց սովետական վարչաձև, ոչինչ կփոխի Սեփթի լիճուն և Ովկլունյան իրավարարութենեն։

Գ. Միացյալ Նահանգներու պետական քարտուղար Պեյնարիծ Քոլպարին 1920 թվի մարտին, իտալական դեսպանին գրած իր մեկ

նամակով, հայտարարեց, որ Հայաստանի իր
ազատ դոլովիով կրնա պահպանել մի-
միայն Ռուսաստանի ԲԱՐՑԱՑԱԿԱՄ ՊԵՏ-
ՊԱՆՈՒԹՅԱՆԲ,

Այնուհետև գահավեմ առաջացող փելքերը
ապացուցին Պեյնարիճ Քուպիի իմաստուն
նախատեսությունը:

Հայաստանն առ պողպատես կրոնագրավեր
թրքական հորդաներեն և կովկասյան հայու-
թյունն ալ կրնազնջվեր և չէր ստեղծվեր հա-
յոց այսօրվա Ազգային Ազատ Պետովիունը
պատմական Հայաստանի մեկ տասներորդ հո-
դամասի վրա, եթե Ռուսաստանը օգնության
շնասներ թուրք ներխուժողներու հետ անհա-
վասար դոյսամարտի բռնված հերոսական հաչ
ժողովրդին. Ոչ ալ կպահպանվեր նորաստեղծ
Ազատ Հայ Պետովիունը այնուենու և ավեր-
ված Հայաստան չէր վերածվեր ծաղկող և
շնչողող ԽնդրիթՅԱՆ ԵՐԿՐԻ, եթե Մըլային
Մեծ Ռուսաստանի եղբայրական անսահման
օժանդակությունն ու ախտանիկան պաշտ-
պանությունը: Հետևաբար. —

Զարամտուրյուն է հայ ժողովրդին վերագրել թշնամուրյուն ունել դիմոկրատիի կամ երկրի զեմ, երբ ան, հայ ժողովուրդը, Հայաստանի անկախությունն ու ապագան աճնազելիութեն կապված կդափանի Ամերիկյան պետական բարունության մատնահաջած Սովետական Խորհրդատանի և ազգայի Սովետական ժողովուրդներու մեծ հասարակապետուրյան հետ, և Միացյալ Ազգերեն կապահանջն զերԱԿԱՆ հանել ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՍՀՄՍՆԸ ԸՍՏ ՈՒԽՍՑԵԱՆ ԻՐԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ:

8. Հայ ժողվորդը կապասե և կակնիալե,
որ Միացյալ Նահանգները ստանձննե Հայկա-
կան Հարցը Միացյալ Ազգերու օրակարգի
վրա զներւ և նախաձեռնովիրամը— ՈՒԽԼՍԸՆԻ
ԳԻՒԾԸ ՍՊՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԸ
ԴԱՐՁՆԵԼՈՒ ԱՌԱՋԱԳՐՈՒԹՅԱՄՄԵՐ:

Այդպես ընկեղով, Միացյալ Նահանգները կմնա Հնեւողական իր Մեծ Նախագահի՝ Ուստոր Ռէփուբնի իրավարարության և Պեյն-պղըին Քուպիի հայտարարության, կսրբա- գործե ամերիկյան և հայ ժողովուրդներու հնամյա բարեկամությունը, և վարձահա- տուց կըլլա երկու երկրագնդացին պատե- րազմներուն հայոց մատուցած անձնուրաց- առայտությանը Ամերիկայի պաշտպանության և պատաստենչ ազգերու դատին՝ ընդդեմ գերմանական գիշատիչ աշխարհաւիրու- թյան:

Նվ եթի Միացյալ Նահանգները ստանձնել Հայկական Հարցի պաշտպանությունը Միացյալ Ազգերու առջև, և Ուկիմընի սահմանադրած հայապատկան եռկրամասը մեռա-

դարձվի Հայկական Սովետական Հանրապետության, ամերիկյան կառավարությունը, անտարակույս պիտի սատարած ըլլա գեմուկրասի ամրացման և խաղաղության տևա-

կանացման Միջին Արևելքի մեջ, և պիտի նրամեջ հայ ժողովրդի, բովանդակ ազատատենչ մարդկության սերն ու համակրությունը:

(«Երաբե» 27 սեպտ. 1947 թ.)

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԵՐԳԻՉ Պ. ԼԻՍԻՑՅԱՆ ԿԵՐԳԵ ՀՈՒՆԳԱՐԻՈ ՄԵԶ

Վերջերս Պուտարեշի այցելած է սովետ արտիստներու և երգիչներու խումբ Ֆ. Արոնց կարգին կտոնվեր Մոսկվայի Մհեմ օրերային թատրոնի պարիթոն Պավել Լիսիցյան: Օրեր առաջ անոնց ժամանումը ծանուցված էր արդեն պատերու խոշոր ծանուցումներով:

«Նեյր օրերա»-ին մեջ, ուր տեղի ունեցած է առաջին երգահանդեսը, ներկա եղած են Հովհարիո Հանրապետության նախագահ Ն. Վ. Թիւտի Զոլթան, ուստի հրամանատար Ավիրիտով, Պուտարեշի գրավման սովետ ուժերու վերին հրամանատար Զամերցև և իր տեղակալ՝ Վահան Պլեխանյան, Հովհար պետական և քաղաքական դիմքեր, օտար դիվանագետներու ամբողջ կազմը և երգու հազարի հասնող ժողովրդային բազմություն մը:

Երգահանդեսը, որուն բացումը կատարած է Հովհար կրոնից և մշակութի նախարար Պ. Օրթովալի Կյուլա ավուր պատշաճի ճառով մը, անցած է շափազանց փայլուն: Երբ կարգը եկած է Լիսիցյանի, մեր տաղանդավոր ու անվանի ազգակիցը, որ նախապես կերպի Երևանի մեջ, բայց եկած է ժամուն դեմքով և երաժշտական բարձր վայելի պահեր ընծայած է ունկընդիրներուն, երգելով և վրոպացի և ուստի հեղի-

նակներե ընտիր կտորներ: Հայտագրին հայկական մասը անսախընթաց խանդավառություն ստեղծած է զգլիսիշ հմայքին տակ Լիսիցյանի երգած «Կարմիր վարդ»-ին և «Միծեռնակա-ին», իսկ վերջին մասը եղած է կատարյալ անակնկալ մը և որոտընդուստ ծափեր խլած, երբ հոնգարերն լեզվով երգած է հոնգար երաժշտագիտ Գուտալի մեկ «արիստո-ն, շափազանց հաջող: Հովհարացիներն շատեր ապշած են հայու մը այսպես իրենց լեզվով երգելլ տեսնելով, իսկ տեղական թերթերը սյունակներ նվիրած են անոր: Անոցմեն մեկը մինչև անգամ դրած է. — «Եթե շափազանցություն չէ, դեռ այդ օրերային հին պատերը այսպան ովկություն չեն տեսած ու մեկ արվեստագիտի եղած ժամանակ...»:

Պուտարեշի հայությունը ի պատիվ Լիսիցյանի սարքած է ճաշկերութի մը, որուն ներկա գտնված է դրեթե ամբողջ գաղութը: Ի մեջ ալլոց ներկա եղած են Սովետ Միության գեսպանատան ավագ քարտուղար Միիրնով և գրավման քոմիսիոնի անդամ Մամիկոն: Սեղանին նախագահած է Հայ Միության փոխ-նախագահ Պ. Ահարոն Մհերյան:

(«Եփրատ» 19 հոկտ. 1947 թ.)

ԳՈՒՐԳԵՆ ԱԼԵՍՅԱՆԻ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱՅԱՆԴԵՍԸ ԹԱՈՒՆ ՀՈԼԻ ՄԵԶ

«Երաբեր»-ը հայորդում է, որ «Հազար հինգ հարյուր անձեր բաղկացած երաժշտասեր հայ հասարակություն մը, Հոկտեմբեր 3-ի երեկոյին հավաքված էր Թառն Հուլիս սրահին մեջ, ներկա ըլլալու համար հոյակապ սիմֆոնիկ նվագահանդեսի մը,

որուն նմանը քիչ անգամ պատահած է ամերիկահայ իրականության մշակութային կրանքի անցյալին մեջ: Այս առթիվ արտապատճեն հնգ համարում կամ պատճենագիր 3-ի համարում զետեղված Պերճ Ա. Խաչատրյանի հոդվածից մի հատված:

Պլանով, ենք համար մեր հարբեն ասացին թե չէ հավա պլանով մեջ Սվարայրին նոյնչափեն է քաղցրազրուցիկ, ուր զվարդան ի վարդն տեսնե կարմրելի: Ալիշան

Սպենդիարյան, հայ համանվագային երաժշտության նախահայրը, առաջարած և լուսական է:

1947 թ. հոկտեմբեր 3-ի գիշերը, լավ մարզված և կարող արվեստագետների բազկացած սիմֆոնի օրբեսուրան, Ալեմշահի

Սպենդիարյան, հայ համանվագային երաժշտության նախահայրը, առաջարած և լուսական է:

նլարունին տակ տվավ անզուգական վայելք մը զեղարգեստասահը ունկնդիրներուն:

Ալեմշահ՝ կարող զեկավար և Սպենդիարյանի գործերուն լավագույն մեկնաբանիչն է: Հայտագրի բացումն ու փակումը կատարվեցավ Սպենդիարյանով: Օրբեսիթրան նույնքան հաջող կերպով նվազեց Ալեմշահի ստեղծագործությունները:

Եթի իր գործերուն մեջ անպայման ազդեցույն հարկ ըլլար փնտուել, անմիջապես Սպենդիարյան պիտի գար մեր միտքը, իսկ եթի իր գործերուն մեջ Սպենդիարյան ցայտուն կերպով դուրս չգար, այդ արդյունքն է իր երաժշտական կուռ պաշարին:

Ալեմշահի ստեղծագործությունները օրինալ են: Անոնք նման նույն հոր զավակներուն՝ առանձինն իրարմի կտարբերին, բայց հասարակաց հատկանիշ մը՝ կարմիր գծի մը նման կանցնի բոլորին միջև. այդ Ալեմշահի անձնական դրումն է:

Ալեմշահ ոչ միայն քաջանմուտ է հայ եկեղեցական և Փոլքլորային երաժշտության, այլև մեր գրականության, ավանդությանց, դիցարանության, դյուցազնաբանության և սովորությանց:

Իր բազմակողմանի հմտության շնորհիվ կարողացած է հարազատորեն երանգավորել նաև իր ստեղծագործությունները:

Հեքյար-ավանդության սիմֆոնիք-բոնմը մեզ կիոխաղը ետ, դեպի մեր մանկության շրջանը: Վառ երևակայությամբ, կախված հեքյաթասաց մամիկի շրթներին... հետաքրքրութենե շնչառապառ, հե ի հե կհետեկինք դեմքերու և դեպքերու... կնույնանանք հերոսներու հետո... լրսես թե՝ պատմությունը հիմա կհատնի՞... կընդհատվի, բայց կշարունակվի, ավելի գումագեղ, ավելի հեշտուր...

ՌՈՒԲԵՆ ՄԱՄՈՒԼՅԱՆ ԱՐԺԵՆԹԻՆԻ ՄԵԶ

Հուկիս 11-ին, այցելական նպատակավ, Միացյալ Նահանգաց „Del Sud“ շոգենավով նյութառքեն Պուենոս Այրես ժամանեց հոշակավոր բեմակար Ռուբեն Մամուլյան՝ ընկերակցությամբ իր տիկուոց:

Առիթեն օգտվելով տեղվույս հայ Առաքելական Եկեղեցի Հոգարարձության նախաձեռնությամբ և Հարավային Ամերիկայի Կաթոլիկոսական Պատուիրակ Գերաշնորհ: Տ. Դարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրյանի հովանավորությամբ ճաշկերութ մը սարքեցավ ի պատիվ Ռուբեն Մամուլյանի, ամսույս 16-ի երեկոյին, քաջարիս ամենափառավոր ճաշարականերեն Les ambassadeurs-ի

Արևելյան գիշերներ.— Թիփիթը Արևելքը հոն է իր բոլոր հակասություններով: Փարամության բով սովորությունը... Երիխի մը շրեթին ի տես տերպիշի մը անտարբեր երթը... Հազարավոր մականացուներ գոյության պայքարով կտվայտին... քողերու տակ կալանավոր գեղութիներ՝ որոնց աշխարհը կմկի և կիվեցանա վանդակորմերու ետև... յավ և բերկրանք, քաղց ու պերճանք, բոլոր ի մի ձուզած են Արևելքի չերմ բուզբին տակ....

Ավարայր.— Վարդանն ու իր անձնութաց քաշերը Ալիշանի հայրենասիրական այնքան սաք շունչին տակ հոգի առին:

Ալիշան կազմով տկար, բայց հոգիով անվեհի էր: Ին Արաւատյան դաշտն ի վայր հայկազանց հաղթական գրոհով հայու և Հայաստանի այսօրվա փառահիղ իրականությունը երազեց:

Ահա այսամիտ պատմական ու մեր տոհմիկ նկարագրի ամենացայտուն մեկ դրվագին վրա հիմնված է Ալեմշահի Ավարայր սիմֆոնիք բոնմը:

Հայ համանվագային երաժշտության ամենափայլուն էջերեն մին կազմելու սահմանված այս ստեղծագործությունը կրոնական և նկարագրական երաժշտության մեջ նմուշն է:

Այնպիսի հոյակապրեն կերտված որպատճառ-ներ կան «Ավարայր»-ի մեջ, որ գործին միջազգային արժեք և ճանաչում կերպված են:

Նորմա Գազանձյան, խոստումնալից երիտասարդ արլեստապիտուհին, ունի վճիռ ու կուտ ձայն ու մաքուր առողջապահություն:

Ալեմշահնեն՝ իդձեր, Նազեր, նմ սերը և Սերը անձանոր է երգերը երգեց ինքնամբութահ, կշուլած ձայնով և լավ հասկացությամբ:

մեջ: Ներկա էր հազարի մոտ հոծ բազմություն մը գաղութիս ընկերային բոլոր խավերեն:

Ճաշը սկսակ «Հայր Մեր»-ով, զոր երգեց «Կոմիտաս» երգչախումբը, ղեկավարությամբ Պ. Լ. Վարդապետյանի:

Ճաշեն հետո Հայ Առաքելական Եկեղեցով Հոգարձության պատվոն նախագահ և գաղութիս աղքային բարերար Տիար Հրաման նիքության, ըստ պատշաճի ներկայացնելե հետո օրվա պատվոն հյուրը, խոսքը տվակ օրվան ատենախոսներուն: Խոսեցան Հայ Առաքելական Եկեղեցով Հոգարձության ատենապետ Տիար Խսահակ Պահաճյան, տեղ-

վույս Ամերիկան Աստուածաբանական Հեմարանի փիլիսոփայության բրոֆեսոր տոքտ. Jrvens Paul (Երվանդ Պողոսյան), անգլերեն լեզվով, հասկնակի ըլլալու համար Տիկին Մամուլանի, և Սրբազն Հայրը, որոնք բոլորն ալ գովեց ընելով Ռուբեն Մամուլանի բնմական հանճարին, ըսին թե իր մեջ խտացած կտեսնենք հայ հանճարին ստեղծագործ միաբը:

Սրբազն Հայրը իր խոսքերը վերջացուց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զի անունով, Ռուբեն Մամուլանի նիմիրելով անթառամներե կաղմած ծաղկեփունջ մը, զոր իր հետը բերած էր հայրապետական ընտրության համար Հայաստան ուղևորութենան վերադարձին. միանգամայն իր հայրական համբուլը դրոշմեց Ռ. Մամուլանի հակատին: Ի վերջո խանդավառ ծափերու մեջ խոսք առավ օրվա պատվո հյուրը՝ Ռուբեն Մամուլան, որ ըսակ թե բառերը անզոր են

ԿԻԼԵԿԻ ՇԵՐՈՒՆԱԶԱՐԴ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ԻՆՉՐԵՍ ՆԱԵՎ Պ. Պ. ՊԱԳԱԼՅԱՆ,
ԳԱԼԵՍՔՅԱՐՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵՎ ՄԱՆՎԵԼՅԱՆ ՊԱՏՎՈ ԳՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾ
ՍՈՎԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵ

Հոկտեմբեր 23-ին, երեկոյան Պեյրութի Սովետ Միության դեսպանատան մեջ տեղի ունեցավ ընդունելով յուն մը, ուր ներկա էին Կիլեկի վեհափառ Հայրապետը, Սովետ դեսպանատան անձնակազմը, Խաղ Սրբազն, Ներգաղթի կոմիտեի անդամներ և այլ անձնավորություններ:

Սովետ դեսպան Պ. Դանիել Սոլոդ, Սովետական Հայաստանի Գերագույն Սովետի նախագահության անունով, Պատվո. Դրեյք հանձնեց Մեծի Տանն Կիլեկի ու. Ա. Պ.

արտահայտելու համար շնորհակալիքի գգացումներս ինձ ընծայված խանդավառ ցուցեցնուն և պատիվներուն Համար, Հետո գովեց հյուսեց հայ թատրոնին, վերարժարելով Թիֆլիսի իր հուշերը: Ան իր խոսքերը վերջացուց թելադրելով սիրել մեր հայրենիքը և մեր եղբայրները, հանճարարեց սիրել նաև մեր երկրորդ հայրենիքը ու հարգալից ըլլալ մեզ հյուրընկալող ժողովուրդներուն հանդիպեց:

«Կոմիտաս» երգչախումբը, ղեկավարությամբ Պ. Լոն Վարդապետյանին, երգեց երկու երգեր՝ «Ալապյազ» և «Կողբա աւալին» մեծապես ավելցնելով երեկութիւն փայլը:

Ռ. Մամուլան սույն երեկութեն երեք օր վերջ օդանավ առնելով մեկնեցավ Բիոտ տե ժանելյոր (Պրազիլ):

Թ. ՏԵՏԵՅԱՆ

(«Հայաստանի կոչեակ» 6 սեպտ., 1947 թ.)

Հափառ Հայրապետին, ինչպես նաև Ներդաղթի Կեդրոնական Կոմիտեի նախագահ Պ. Բագրատ Պագալյանին, Դամասկոսի Ներդաղթի Կոմիտեի նախագահ Պ. Հրանդ Դոփրյանին, Հալեպի Ներդաղթի Կոմիտեի նախագահ Պ. Արշակ Դալեմքյարյանին և անցրալ տարկան Ներդաղթի Կեդրոնական Կոմիտեի անդամներն Պ. Արամ Մանվելյանին: Պ. Դանիել Սոլոդ և վեհափառ Հայրապետական առաջարկանադարյան այլևս առաջարկանադարյան այլևս անկրկնելի կոթողները, և դարերու խորքեն կյանքի կոշկած են հայոց պատմության դեմքերը՝ այնքան իրական ու պատկառաղետ:

(«Եկեղեց» 26 հոկտ. 1947 թ.)

ԱՐԴԱԿ ՖԵԹՎԱՀՅԱՆ

Ժարարեց՝ գրում է.—

Մեռավ Արշակ Ֆեթվահյանը, մեկը հայ նկարչության անվանի վարպետներեն:

Տաղանդավոր հայ ժողովուրդը միշտ ալ ծնունդ տված է արվեստի շատ ականավոր գործիչներու և այսուհետև ալ ծնունդ կուտա, մանավանդ իր ազգային պանծալի վերածնդյան այս դարուն, երբ Հայկական Սովետական Հանրապետության երկրամասը դարձած է ազգային մշակութի մշտավառ հնոցը: Նկարիչ-գիտնական Արշակ Ֆեթվահյանը, սակայն, միշտ ալ պիտի գրավե իր որույն տեղը հայ արվեստի պանծեռնի մեջ:

Մեծ է Արշակ Ֆեթվահյանի վաստակը: Անու միայն մեզի տված է արվեստի գեղեցիկ գործեր և հայկական ճարտարապետության

ու արվեստի մասին մեծածավալ ուսումնակարություններ՝ հայերեն, ուսակերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով, այլ մանավանդ անոր կախարդական վրձինի տակ պատառներու վրա վերստեղծված են հայկական ճարտարապետության այլևս անկրկնելի կոթողները, և դարերու խորքեն կյանքի կոշկած են հայոց պատմության դեմքերը՝ այնքան իրական ու պատկառաղետ:

Որպես նկարիչ-գիտնական, Ա. Ֆեթվահյանը իրեն համար կյանքի նպատակ ընտրած էր—դարձնել հայկական արվեստը համաշխարհային սեփականություն: Եվ իր այդ նպատակի մեջ մեծ վարպետ գերազանցապես հաջողած է, վերաբերելով և վերստին ստեղծելով հայկական արվեստի լավագույն

նմուշները և իր ստեղծագործական ուրույն կնիքը գնելով անոնցմե ամեն մեկի վրա։ Ֆեթվաճյանի մահվան կապակցությամբ ամենեն ավելի ողբերգականն այն է, որ Մեծ Վարպետը համարյա տարիե մը ի վեր կպատրաստվեր աշնան մեկնելու Հայաստան։ Եվ ահա, հոկտեմբերին փոխանակ չերդագին ու լիախինդ ողջերթ մաղթելու Սովետական Հայաստան մեկնող սիրելի վարպետին, անոր բազմաշարշար մարմինը կհանձնենք կիզարանին, որպեսզի Միացյալ Նահանգներեն առաջին հայրենադարձողները իրենց հետ հայրենի երկիր տանին հայ ժողովրդի արժանավոր որդպույն աճյունը։

Ան շբավականանալով այն իրողությամբ, որ ինքն արդեն նախապես կոտակով մը իր բոլոր ուսումնասիրություններն ու ստեղծագործությունները թողած էր Սովետական Հայաստանին, իր մահվեն դեռ քիչ առաջ, անձամբ այդ ամենքը հանձնեց Հայկական Սովետական Հանրապետության կառավարության ներգաղթի լիազոր Արքահամ Շահնաղարյանին։

Ո՞վ չիշեր Արշակ Ֆեթվաճյանը Համաշխարհային Հայկական Քոնկրեսի բեմի վրա։ Համագգային համագումարին եկած էր 84-ամյա տաղանդավոր նկարիչ-գիտնականը, արհամարհելով զինք տանջող հիվանդությունը։ Եկած էր ան հանուր հայ ժողովրդի ներկայացուցիչներուն հետ պահանջելու, որ Ռիլսընի գիծը պետք է դառնա Հայկական Սովետական Հանրապետության սահմանը։

Ֆեթվաճյանը թերթերու ներկայացուցիչներու հետ էր Սովետական Միության նյութորդի հյուպատոսարանի մեջ, իր ավագ հյուպատոս Լոմաքինը կարգաց Սովետական Հայաստանի կառավարության պատմական որոշումը՝ Միացյալ Նահանգներեն և հայրենադարձ կազմակերպելու մասին։

Իր ոռաերեն ուղերձի մեջ, զոր այդ օր Արշակ Ֆեթվաճյանն արտասանեց, ան խոսքն ուղղելով ներկա եղող հայերուն, շետակի ըսավ։—

«Մենք պետք է ոչ մեկ ջանք խնայենք Սովետական փրկարար իշխանությունը պահելու, պահպանելու և զորացնելու համար Հայաստանի մեջ։ Եթե, Ասուուած մի արացի, ռոպէ մը Սովետական իշխանությունը ան-

հետանա Հայաստաններ, այդ կըլլա հայ ժողովրդի փախնարը։ Ապրի Հայաստանը, բող անկցին անոր բոլոր քշնամիները։

Իր համեստ անկորոնչելի նկարներու և երկերու կարգին, այս ալ Ա. Ֆեթվաճյանի մեղի թողած կտակն է։ Այդ վերջին կտակն իր մեջ



Արշակ Ֆեթվաճյան

կիստացնե աղջային իղձը հայ ժողովրդին, որու հոգմուլի թարգմանը հանդիսացած է միշտ Արշակ Ֆեթվաճյանն իր վրձինով։

Հայ ժողովուրդը աշքի լույսի պես պիտի պահե, պահպանե և զորացնե Ազգային Ազատ Հայկական Սովետական Հանրապետությունը, տարածելով անոր փառքը պատմական Հայաստանի ամբողջ երկրամասի վրա։ Եվ համբարժական Սովետական Մայր Հայաստանի փառքին հետ պիտի պահնձան Արշակ Ֆեթվաճյանի հիշատակը։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԾԵՐ

Արշակ Ֆեթվաճյան ծնած է Տրապիզոնի մեջ, 1866 թվականին։ Տեղույն Ազգային վարժարանին մեջ իր նախակրթությունը ստանուի վերջ, 16 տարեկանին կմտնե լ.

Պոլսո կայսերական Գեղարվեստից վարժարանը և 1887-ին կընդունի իր վկայականը, իր անդրանիկի ընթացավարտը նույն հաստատության, արժանանալով նույն տակն

«Հոռոմա մղցանակօ-ին»: 1887 օգոստոս ամսուն կանցնի Հռոմ և կմտնե Սան Լավա Գեղարքվեստից Ակադեմիան, աշակերտելով ի մեջ այլոց իր ժամանակին աժենեն միև վարպետներին փրոփ. Սեղար Մակարիի:

Իրեն նկարիչ ասպարեզ կուգա երկու նկարներով, զորս կցուցադրե Պալացցու Արտե Մոդերնոյի մէջ և իր վրա հրավիրե մասնավորաբար հարուստ գեղարվեստաներներու ուշադրությունը:

1891-ին կերթա Վիեննա, ուր չորս տարի կգործ իրեն ազատ արվեստագետ և կնկարի բարձրաստիճան աճնավորությանց դիմանկարները: Հո՛ս է, որ կնկարե և կցուցադրե իր «Թրքական սուրբանդակը Անարութիւն Անգ» նկարը, որ իրեն համար կշահի մեծ ժողովրդականություն:

Ապա կմեկնի Պետրովրատ (այժմ Լենինկարատ), ուր անմիջապես անդամ կընտրվի նկարիչներու կայսերական ընկերության: Ուղի տարիներու ընթացքին, զոր անցուց ոռուսական մայրաքաղաքին մեջ, զանազան առիթներով կմասնակցի կայսերական Ակադեմիայի և այլ ցուցահանդեմներու: Հո՛ս է, որ Ֆեթվաճյանի նկարչական արժանիքն ու համբավը կհաստատվի ու կտարածվի: Հետզհետե հմայվելով հիշատակարանական նկարչության պատկառազդու և մեծավայելու գեղեցկութենեն, կդադրի մանր նկարներով զբաղելե և կդառնա որմեանկարիչ:

Ֆեթվաճյանի հայագիտական ու հանգիտական աշխատության շրջանը կսկսի 1900-ին, թիֆլիզի մեջ իր առաջին ցուցադրութենեն: Անկե ասդին ամեն տարի կըրչի Ռուսական Հայաստանը, մեկ ծայրեն մյուսը, գուղը ու քաղաք, լեռ ու ձոր, առանց հոգնելու, առանց տրտնջալու, բոլորովին մինակ, ապավինելով միայն իր ուժերուն և աղբյուրներուն, ուսումնասիրելու, նկարելու և գծադրելու համար, անհում համբերությամբ, բժաննդիր ճշգրտությամբ, ավեր կամ կիսավեր պատմական հիշատակարաններ, ինչպես եկեղեցիներ, հանրային շենքեր, բերդեր կամ պարիսպներ, և այլն, ու նաև ազգագրական տիպեր: Ու այսպես տարվե տարի Ֆեթվաճյան ի լույս կըներ ստեղծագործ և ինքնատիպ հանճարի մը մոռացված և թաղված փառքերը:

Ոչ միայն իր նկարներովը քաղաքակիրթ աշխարհին ուշադրության կներկայացնե հաշկական գեղարքվեստին, մասնավորաբար ճարտարապետության, արժանիքը, հապանական կամաց նույն ոճը և ներշնչումը արդյամբ ապրեցնել կարգ մը եկեղեցիներու մեջ,

որոնց մասնակի կամ ամբողջական շինության գործը իրեն կհանձնվի: Հին գեղեցկություններ այսպես կիրուծ ու կհաջողի վերաբաղրել օրինակի համար Կուսանաց Սնապատի Սր. Ստեփանենոս եկեղեցին վերաշինությունը և Արմավիրի Սր. Գևորգ եկեղեցին շինությանը մեջ: Ասոնք և ասոնց հետ, Ղարսի նորակառուց Սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո բեմը, խաչկալը, դռները, ինչպես նաև կարգ մը դամբարանական գործեր բոլոր տեսնողներուն հիշցումի տուրկա եղած են ու կշարունակեն ըլլալ մինչև այսօր:

Ֆեթվաճյան հայկական ճարտարապետության մեծագույն հայտնագործիչը և վերծանողը պետք է նկատել:

1919 Փարիզ կանցնի Հանիցնի Հանրապետության նամակադրոշմերը պատրաստելու պաշտոնով: Հոն, քրանսացի դիտնականներու հրավիերով, իր հնագիտական և ազգակրական նկարները կցուցադրե Լուվրը աշխային թանգարանին Առ Դեկուատի-ի բաժնին մեջ: Նմանօրինակ ցուցադրություններ կուտա լոնտոն, Վկլտորիա էնտ Ալբերտ Մյուզեումին և անգլիացի ճարտարապետներու Արքայական ինստիտուտին մեջ: Թե՛ Փարիզ և թե լոնտոն, գիտական շրջանակներու մեջ իսկ Ֆեթվաճյանի ցուցակադրությունները հայտնությունը մը կըլլան հայկական ճարտարապետության ինքնատիպությանը և գեղեցկությանը համար:

1922, օգոստոս ամսուն, Ֆեթվաճյան Ամերիկա-եկավ: Նույն տարվո հոկտեմբերին երկու շաբաթ իր թանկագին հավաքածոն ցուցադրության դրվեցավ Քոլոմպիա համալսարանի Ավերի Արքիթեքչըրել Լայպցիրի ընդարձակ սրահին մեջ: Ցուցադրությունը մըն ալ տվավ Շիքակոյի համալսարանին մեջ այդ հաստատության նրենիսանս Սուսայրի: Հրավիերովը և հովանավորությամբը: Քայեճ Արթ Սոսայթի և Ամերիկըն Արքեռլանիիթը Խնասիտուտի տարեկան համաժողովին առթիվ և Փրինսիրը Խումբիլը սիրի մեջ ցուցադրությի մեջ ցուցադրեց մասնավոր հրավերովը այդ կրկնակ կազմակերպությանց: Ամերիկայի մեջ, ինչպես նաև այլուր, տրված սուլու ցուցադրությունները արժանացան մասնավոր դրվատիքի և հիացման:

Ելլուպական և ամերիկյան բազմաթիվ մասնագիտական կազմոր պարբերականներ և թերթեր ներբողյաններ հրատարակած են իր գործին, նաև հայկական ճարտարապետության, մասին և անոնցմե ոմանք արտադրած են իր գունավոր պատկերներն և գծադրություններն մի քանին,

Յեթվաճյան անձնական նախաձեռնությամբ հրատարակած է իր պատկերներն իր փոքրադիր հավաքածու մը և անշատ քարտերու գեղեցիկ շարք մը: Հրատարակած է մեծադիր իրաստ նրբարվեստ արտադրություն

մը իր շքեղ նկարներն մեկուն՝ «Մանուկ Հայաստանը»: Փետք է ավելցնել, որ նկարիչը կովկասահայ մամուկին մեջ ունեցած է բազմաթիվ հմտալից հոդվածներ հայկական գեղարվեստին զանազան փուլերուն մասին:

(«Հարքեր», 16 հոկտ., 1947 թ.)

ԱՐՄԵՆԻԱ ԲԻՊՈՐՆ — „ՎԵՐԱՇՆՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ“

Ամերիկահայ Ազգային խորհրդի այս օգտակար և այժմէական գիրքը, որ երկու տարին ի վեր մեծ խնամքով կպատրաստեր վեր. Չարլզ Վլթանես Աղնակյանը, այժմ տպագրված է:

Գիրքը կրաղկանա 216 էջերն, կպարունակել 80-ի մոտ պատկերներ՝ անցյալ և ներկա կլանքեն առնված, ինչպես նաև երեանի շատ մը փառավոր շենքերը և տեսարանները. Գիրքն ունի հայոց անմա՞ս բարեկամ:

Յրանսայի մեջ պատրաստությունը տպարտված է «Է. Էսբալ տյու Սոլեյ» անուն ուր ֆիլմի մը, որուն բեմադրիչն է հայագի Հանրի Վերնեոյ, որը անվամբ Աշոտ Մալահյան:

Յրանսահայ բեմադրիչին առաջին ֆիլմն է ասիկա, որուն գլխավոր դիրք ստանձնած է մեծահամբավ կատակերգակ Յերեանելը.

Բացի բեմադրիչին հայ ըլլալեն, այս գործը մեզի համար շահեկան է անով, որ անոր

նախագահ Ուստրո Ովկունի պատկերը, նամակը և Հայաստանի գծած քարտեղը: Գիրքը կպարունակե Հայկական դատի կարճ պատմականը, Սովետական Հայաստանի հրաշալի վերելքը 26 տարվա ընթացքին, և նաև երկար ցանկ մը կարեոր լնդուներով հայոց մասին գրված գրքերու:

Գիրքը տպված է հատկապես լուլ թղթի վրա, կազմված հաստատում լաթակազմով:

(«Հարքեր» 29 հունիս, 1947 թ.)

ՀԱՅ ՆՈՐ ԲԵՄԱԴՐԻՉ ՄԸ

մեջ կերեին Մարտելիո հայոց եկեղեցին, թե իր ներքինով և թե արտաքինով, պատարագի պահուն և թե Վարդան Մարգիսյանի «Արմենիա» երգչախումբը, որ կերպե ոքրիսասուի մեջ մեր հայտնեցավուր:

Ասկէ զատ, փիլմին մեջ նափուլիցի երգչի մը զերք ստանձնած է թենոր էլեմանուել Փափազյան և կարեոր բաժին մըն ալ բերած է փոքրիկն՝ Անիթա Մարգիսյան:

(«Միուրին» 20 սեպտեմբեր 1947 թ.)

ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ „ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ“ ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՄԱՍԻՆ

«ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ» շարժապատկերը ամեն հայու սրտեն կխոսի: Հայության պատմությունն ու ճակատագիրը պահի մը մեջ կիրտացնե այս երիշը: Հայաստան, հայության վառող ճրագարանը, անգամ մըն ալ կլուսափալի հայուն հույսը և հազարքը, իրականության հարազատ պատկեր եղող այս երի-

զով: Հայրենադարձի կարեորությունը կշեշտվի մեր մտքին մեջ, երբ տեսնենք «ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ»-ին: Տարագիր հայը անգամ մը ևս կլան հիմ երգը «Եմ հայրենիք զիս կիանչե...»:

(«Հարքեր» 22 օգոստոս, 1947)

